ՄԻԱՅՆԱԿ
ԸՆԴԴԵՄ ՃԱԿԱՏԱԳՐԻ

Սամվել Ֆարմանյան

ՄԻԱՅՆԱԿ ԸՆԴԴԵՄ ճակատագրի

Ֆուտբոլային դիվանագիտության հետնաբեմը

new mag

ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 327:94(479.25)
ԳՄԴ 66.4+ 63.3(5Հ)
Ֆ 291

Ֆարմանյան Սամվել
Ֆ 291 Միայնակ ընդդեմ ճակատագրի: Ֆուտբոլային դիվանագիտության հետնաբեմը / Ս. Ֆարմանյան.- Եր.: Newmag, 2023.- 448 էջ:

Ինչո՞ւ և ինչպե՞ս սկիզբ առավ հայ-թուրքական գործընթացը: Ի՞նչ ընտրության առաջ էր կանգնած Հայաստանը: Ի՞նչ էր իրականում տեղի ունենում Նյու Յորքում, Դավոսում, Մյունխենում, Պրահայում, Ստամբուլում, Ցյուրիխում և Բուրսայում:

Սամվել Ֆարմանյանն ականատեսի վկայություններով ներկայացնում է ֆուտբոլային դիվանագիտության ամբողջ ընթացքը: Առաջին անգամ գաղտնազերծվում են ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի բանակցությունները, որոնք 2008-2010 թթ. վարել է Թուրքիայի նախագահ Գյուլի, վարչապետ Էրդողանի, Ֆրանսիայի նախագահ Սարկոզիի, ԱՄՆ Նախագահ Օբամայի, պետքարտուղար Քլինթոնի և այլ պաշտոնյաների հետ: Ներկայացվում է կարգավորման նախապատմությունը, աշխարհաքաղաքական կենտրոնների շահերի իրական քարտեզը, ներգրավված կողմերի իրարամերժ նպատակները, ինտրիգային հետնաբեմն ու որոշումների տրամաբանությունը:

Հուշագրությունը կօգնի հասկանալ հայ-թուրքական ու արցախյան հիմնախնդիրները, բացահայտել տարածաշրջանային իրողությունների պատճառահետևանքային կապերը՝ հասնելով մեր օրեր: Գիրքը կհետաքրքրի պատմաբաններին, պետական, քաղաքական, հասարակական գործիչներին, դիվանագետներին, լրագրողներին, վերլուծաբաններին ու հետաքրքրասեր ընթերցողներին:

ՀՏԴ 327:94(479.25)
ԳՄԴ 66.4+ 63.3(5Հ)

Գրքի հրատարակմանն աջակցել է
Արդյունաբերողների և գործարարների
միության Նախագահ Արսեն Ղազարյանը

ISBN 978-9939-884-84-4
Սամվել Ֆարմանյան «Միայնակ ընդդեմ ճակատագրի. ֆուտբոլային դիվանագիտության հետնաբեմը» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ
Գրքի հրատարակման բոլոր իրավունքները պատկանում են Newmag ընկերությանը:

Բովանդակություն

Առաջաբան 9

Գլուխ 1 Խաղ՝ չորս ձեռքով 21

Գլուխ 2 Հայ-թուրքական թնջուկը 35

Գլուխ 3 Մեկ պիցցա, մի քանի բերան 75

Գլուխ 4 Պերճաշուք ու նրբագեղ, բայց չեզոք 93

Գլուխ 5 Աստանա. Ռուսաստանի միջուկային ճամպրուկը 99

Գլուխ 6 Հարցազրույց՝ Մուրադի դեմքով 107

Գլուխ 7 Եվ նույնիսկ Ուգո Չավեսը 117

Գլուխ 8 Արևմուտքը համակարծիք է՝ Սաակաշվիլին ապուշ է 153

Գլուխ 9 Ռեկորդ Դավոսում 165

Գլուխ 10 Օբաման ու Նալբանդյանը Դոլմաբահչեում 195

Գլուխ 11 Բաբաջանը Բաղրամյան 26-ում 209

Գլուխ 12 Ապրիլի 22-ը, Օբամայի ուղերձն ու Բայդենի բլեֆը 219

Գլուխ 13 Լավ ու վատ ոստիկանների թուրքական խաղը 233

Գլուխ 14 Համահայկական ուղևորությունը 249

Գլուխ 15 Անվտանգության խորհրդի նիստը 287

Գլուխ 16 Ցյուրիխյան Էնդշպիլ 295
Գլուխ 17 Թուրքերը հեռացնում են Աթաթուրքի ազդերիզը 309
Գլուխ 18 Ամերիկյան բանագնացները 327
Գլուխ 19 ՍԴ որոշումն ու Ստեյնբերգի այցը Երևան 343
Գլուխ 20 Սարգսյանը մերժում է Նոբելյան մրցանակի առաջարկը .. 361
Գլուխ 21 Օբամա. միշտ չէ, որ աշխարհն արդար է 383
Գլուխ 22 Սարգսյանը մերժում է Քլինթոնի առաջարկը 405
Գլուխ 23 Ռուսները, հարևանները, ԵՄ-ն ու ՆԱՏՕ-ն 419
Գլուխ 24 Գործընթացի մայրամուտը 431

Վերջաբան 437
Երախտագիտության խոսք 438

Նվիրում եմ զավակներիս՝

Դավիթին ու Նարեին

Առաջաբան

Ժամանակը բաժանելով պայմանական միավորների՝ ժամերի, օրերի, ամիսների, տարիների, տասնամյակների ու դարերի՝ փորձում ենք ավելի հեշտ համակարգել, իմաստավորել ու կառավարել այն: Չէ՞ որ մեր սահմանած այդ պայմանականությունից դուրս՝ ժամանակը չընդհատվող անվերջություն է՝ հավերժ ընթացք, որտեղ ամեն ինչ միմյանց կապված է տեսանելի ու անտեսանելի բազում կապերով: Այդպես է և՛ բնության մեջ, և՛ հանրային կյանքում: Ու հաճախ է պատահում, որ մեր կյանքի ինչ-որ իրադարձության կամ ճակատագրական շրջադարձի բուն պատճառը գնում-հասնում է անցյալի այնպիսի մոռացված անկյուն, որ երբեմն անհավատալի է թվում: Այդպիսին է նաև այս գրքի ստեղծման պատմությունը. հավանաբար այն չէր լինի, եթե 2018 թ. ամառային մի երեկո ընկերներիս հետ չայցելեի երևանյան ջազ ակումբ:

Ջազի ոչ մեծ սիրահար եմ ու ոչ էլ՝ գիտակ, բայց հաճախ էի լինում այդ ակումբում՝ ուղեկցելով արտասահմանյան պատվիրակությունների կամ ընկերներիս հետ: Հարազատ վայր էր, որտեղ ճանաչում էի գրեթե բոլորին՝ երաժիշտներին, մատուցողներին ու ակումբի մշտական հաճախորդներին: Ակումբում դուր չէր գալիս միայն տեղացի որոշ այցելուների քաղքենիական մղումը՝ ցույց տալու սեփական տեղեկացվածությունը ջազից: Մինչդեռ իրականում նրանցից շատերը ջազը սիրում ու հասկանում էին երևի այնքան, որքան՝ ես:

Ստացվել էր այնպես, որ գրեթե անհնար էր, որ օտարերկրացի բարձրաստիճան պաշտոնյա կամ ճանաչված անձ մի քանի օրով լիներ Հայաստանում ու չայցելեր այդ ակումբ: Պաշտոնական կամ աշխատանքային ծրագրերից զատ՝ հյուրերին պետք էր ժամանց ապահովել. «Մալխաս» ակումբը հենց այդ վայրերից մեկն էր: Դա վերաբերում էր Հայաստան այցելող պետական ամենաբարձրաստիճան այրերին՝ պետությունների առաջնորդներ ու միջազգային կազմակերպությունների ղեկավարներ, պաշտպանության ու արտաքին գործերի նախարարներ, խորհրդարանականներ, արտիստներ, մի խոսքով՝ համաշխարհային

ճանաչում կամ հարգանք վայելող մարդիկ ու առանցքային դերակատարներ:

Սեփականատերերն էլ ակումբ այցելող բոլոր հանրաճանաչ դեմքերին խնդրում էին տպավորությունների մասին երկտող կամ ստորագրություն թողնել ակումբի պատերին և լուսանկարվել Լևոն Մալխասյանի հետ: Հետո այդ լուսանկարները զարդարում էին ակումբի պատերը: Պատերին ազատ տեղ գրեթե չկար: Լուսանկարներում կտեսնեիք Ռուսաստանի նախագահներ Պուտինին ու Մեդվեդևին, Ֆրանսիայի նախագահ Շիրակին, Քըրք Քրքորյանին, Արմեն Ջիգարխանյանին ու Շառլ Ազնավուրին, տասնյակ այլ հանրահայտ անձանց: Նրանցից առաջինները չէին կարող ակումբ այցելել առանց հայաստանցի պաշտոնակցի ուղեկցության: Ու լուսանկարներում նաև Հայաստանի նախկին առաջնորդներն էին: Ջազ ակումբի պատերը խոսում էին ակումբի ու նրա դեմքի՝ Լևոն Մալխասյանի հեղինակության ու հռչակի մասին:

Կարճ ժամանակ էր անցել 2018 թ. դրամատիկ իշխանափոխությունից. ձևով՝ սահմանադրական պետական հեղաշրջում, որն իր ազդեցությամբ ու մասշտաբով իսկապես էլ հեղափոխություն էր: Միջազգային մեծ արձագանք ստացած, սակայն դեռևս զուտ տեղական նշանակության շրջադարձային մի իրադարձություն, որը, երկրի քաղաքական իշխանությունից բացի, գլխիվայր շուռ էր տվել գրեթե ամեն ինչ: Հեղափոխությունը այդպես էլ լինում է. արթնանում ես, ու երեկվա իրականությունն արդեն չկա, այլ է մթնոլորտը, ուրիշ են արժեքները, այլակերպ են հարաբերություններն ու նույնիսկ քո ճանաչած մարդիկ: Ամեն ինչ տարբեր է: Երեկվա ընկերներն ու բարեկամները հայտնվել էին բարիկադների տարբեր կողմերում, ամենավերջին բառերով պիտակավորում ու վիրավորում էին նրանց, ում դեռ երեկ ամենաճոռոմ բառերով գովերգում էին ու ուղիներ փնտրում՝ նրանց ուշադրությանն ու երբեմն նույնիսկ բարեհաճ հայացքին արժանանալու համար:

Հայաստանն ու հայությունը բաժանվել էին երկու անհամաչափ խմբերի: Մի կողմում նրանք էին, ովքեր նախաձեռնել կամ մասնակցել էին այդ դրամատիկ իրադարձություններին կամ էլ լռելյայն համակրել իշխանափոխությանն ու դիտորդի կարգավիճակով համալրել մեծամասնության շարքերը: Վերջիններս կլինեին այն կողմում, որը կհաղթեր քաղաքական դիմակայությունում, ու ամենաճոռոմ փաստարկներով կհիմնավորեին,

թե ինչու էր հենց այդ ելքն անխուսափելի, ու որչափ էր այն բխում Հայաստանի ու հայ ժողովրդի շահերից: Նրանցից ամենառուբենսաֆրաստյանները նույնիսկ պատրաստ էին լինելու ի լուր աշխարհի «մասնագիտորեն» հիմնավորել, որ հայ ժողովրդի պատմության պարբերականացումը պետք է վերանայել ու մեր նորագույն պատմության պարբերականացման սահմանագծում դնել հենց այդ շրջադարձային իշխանափոխությունը, որի թանաքը դեռ չէր էլ չորացել: Սրանք օրվա հեղափոխականներն էին՝ ակտիվ, պասիվ կամ Էլիզաբեթ Նոյել-Նոյմանի տեսության այդրոպեական զոհի կարգավիճակում*:

Իսկ մյուս կողմո՞ւմ: Մյուս կողմում նրանք էին, ովքեր այս կամ այն պատճառով դեմ էին տեղի ունեցողին: Նրանք օրվա «հակահեղափոխականներն» էին. առավելագույնը՝ մի քանի հարյուր մարդ: Նրանք, ովքեր խորհրդարանում բաց առճակատման էին գնացել փողոցային շարժման պահանջներին ու խորհրդարանում երկու անգամ դեմ քվեարկել Նիկոլ Փաշինյանի թեկնածությանը վարչապետի պաշտոնում, մեկ էլ՝ երևի հատուկենտ «կոպեռնիկոսներ», որոնք դեռ այդ օրերին կռահում էին, թե ինչով է ավարտվելու բոլորի աչքի առաջ հյուսվող «հեղափոխության» հեքիաթը: Ու այդ սակավամարդ բանակից նրանք, ովքեր փողոցային շարժմանը հակադրվում էին հրապարակայնորեն, լիուլի վճարում էին դրա գինը՝ այդ օրերի համար իսկական անեծքի նմանվող հակահեղափոխականի ու ազգի թշնամու խարան, հանրային ահռելի ատելություն ու բարոյական մեծ ճնշում ամեն քայլափոխի ոչ միայն քո, այլև ընտանիքի անդամների, հատկապես երեխաների ուղղությամբ, ֆիզիկական հաշվեհարդարի սպառնալիքներ, երեկվա սեղանակիցների, հարևանների ու բարեկամների՝ ատելությամբ կամ, լավագույն դեպքում, կարեկցանքով լի հայացքներ: Հեղափոխական Հայաստանն այդ օրերին ողողված էր «հակահեղափոխականների» թաղման բեմականացումներով, նրանց տների մոտ կախված սև ժապավեններով ու տեղադրված ծաղկեպսակներով:

* Elisabeth Noelle-Neumann – Էլիզաբեթ Նոյել-Նոյման (1916-2010), գերմանացի աշխարհահռչակ քաղաքագետ: Ամենահայտնի ներդրումը լռության պարույրի մոդելն է, որը մանրամասն նկարագրված է «Լռության պարույր. հանրային կարծիքը. մեր սոցիալական մաշկը» գրքում: Մոդելը բացատրում է, թե ինչպես կարող է հասարակական կարծիքն ազդել անհատի կարծիքի կամ որոշումների վրա: (Բոլոր ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

Հետո պարզ կդառնար, որ ժողովրդական զայրույթի անվան տակ իրականում թաքնված էր շատ լավ մտածված ու հաշվարկված քաղաքական ձեռնարկ, որի նպատակն այլախոհների մարգինալացումն ու չեզոքացումն էր ընթացող քաղաքական գործընթացներից: Կատարյալ դժոխք կամ չավարտվող երկրաշարժ, որից փրկությունը պարզ էր. միանում ես հեղափոխությանը, խորհրդարանում մի հոգեցունց ելույթ ունենում, ու նույն վայրկյանին հրապարակներում թնդում է անունդ, Facebook-ում շատերն իրենց դիմանկարի փոխարեն դնում են քոնը, մի ակնթարթում «հակահեղափոխականից» դառնում ես համազգային ֆավորիտ:

Վերապրելով քաղաքական երկրաշարժն ու ֆիզիկապես ողջ ու հոգեպես առողջ դուրս գալով դրա փլատակներից՝ ինչ-որ պահի, ինչ-որ կերպ պետք էր փորձել վերադառնալ կյանք՝ գլխիվայր շրջված իրականություն, ու հարմարվել դրան: Հարմարվել, որովհետև միջավայրը փոխելու՝ Հայաստանը լքելու ցանկություն երբեք չէի ունեցել ո՛չ դժվար 1990-ականներին, ո՛չ Շվեդիայում ուսանելիս ու ո՛չ էլ, առավել ևս, 2018-ին:

Իշխանափոխությունից հետո կյանք վերադառնալը աստիճանաբար էր. սկզբում՝ հեռազրույցներ հատուկենտ ընկերների հետ, հետո՝ զգուշավոր զբոսանք շատ անցորդների՝ դեռևս ատելություն արտահայտող հայացքների ներքո, հետո՝ կարճատև այցեր սրճարաններ: Այդպես՝ քայլ առ քայլ, վերաինտեգրում՝ արդեն անծանոթ հասարակությանը, մի քանի օրում անճանաչելի դարձած իրականությանը:

Նման հոգեվիճակում Մոսկվայից ժամանած ու տեղացի մի քանի ընկերներով հավաքվում ենք «Մալխաս» ակումբում: Այցելություն, որը պիտի սրեր պատմության վերաբերյալ իմ մասնագիտական ընկալումներն ու ի վերջո ծնունդ տար այս հուշագրությանը:

Ակումբում ամեն ինչ նույնն էր. հյուրերին դիմավորող ժպտերես Իդան, թախիծն ու կենսուրախությունը հայացքում արտասովոր կերպով զուգակցող Արամոն, բազմոցում ծխախոտի քուլաների մեջ ընկղմված Լևոն Մալխասյանը, ծանոթ և անծանոթ, տեղացի ու օտարերկրացի այցելուները: Երանելի զգացում է, երբ խորթացած ու ճնշող իրականությունում հանկարծ հայտնվում ես ծանոթ միջավայրում: Անասելի բավարարվածություն կա այդ ամենում, փախուստ՝ անհաճո իրականությունից:

Ներսումս, սակայն, զգացմունքների մի կատարյալ խառնուրդ էր, երկու տարբեր իրականությունների բախում: Մի՞թե դրսում կյանքը գլխիվայր

շուռ է եկել, իսկ այստեղ ամեն ինչ մնացել է նույնը: Գուցե մինչև այդ պահը ճիշտ չե՞մ գնահատել իրականությունը: Ամեն դեպքում սա լավատեսության կղզի է: Գտել եմ այս մեկը: Եթե սա կա, ուրեմն կլինեն և այլք: Ընկերներ էլ դեռ կան, կողքիս նստած են: Պետք է բռնվել այս ամենից: Անսովոր բարդությունների միջով անցնելու հարուստ փորձ ունեմ: Ուրեմն, սա էլ կանցնի:

Հայացքս սահում է ակումբի պատերով: Երբ հայտնվել ես քաղցր հիշողություններ արթնացնող միջավայրում, հայացքդ ակամա աջ ու ձախ է թափառում՝ տեսնելու, վերականգնելու ու ամբողջացնելու հիշողությանդ մեջ դաջված միջավայրի ու պատկերների՝ քեզ հարազատ բոլոր դրվագները: Այդպես լինում է, երբ վերադառնում ես այն տունը կամ բնաշխարհը, որտեղ ծնվել-մեծացել ես:

Ակումբի պատերը նույնն էին. չորս կողմը Մալխասի լուսանկարներն էին՝ ակումբ այցելած հանրաճանաչ դեմքերի հետ: Բայց ինչ-որ բան փոխվել էր. նկարներ, որ սովորաբար մեր թիկունքի պատին էին, կարծես չկան: Լուսանկարների տեղե՞րն են փոխել: Հայացքս արագ վազում է պատերի վրայով: Չէ՛, ամեն ինչ տեղում է: Նույնիսկ մեկ նոր լուսանկար կարծես չկա: Բայց մի քանիսն ուղղակի բացակայում են. այն լուսանկարները, որոնցում Սերժ Սարգսյանն էր Մալխասի ու ակումբ այցելած օտարերկրյա առաջնորդների հետ: Ու հարց էր առաջանում. ինչո՞ւ: Չէ՞ որ կան բաներ, որ ավելի բարձր են, քան քաղաքականությունը. արվեստը, մշակույթը, ի վերջո՝ հենց պատմությունը: Չէ՞ որ այդ լուսանկարները ակումբի պատմությունն էին, մի քանի ամիս առաջ՝ նույնիսկ նրա հպարտությունը: Հիմա ի՞նչ. ջնջում ես պատմության այն էջը, որն այդ պահին քեզ էլ պետք չէ՞: Բայց այդպես կարելի՞ է, պատմությունն այդպես հեշտությամբ ուրացվո՞ւմ ու ջնջվո՞ւմ է:

Դրական զգացումներին արագ խառնվում են հիասթափությունն ու արագացող սրտխփոցը: Ընկերներիս ականջից հեռու՝ ծածուկ հարցնում եմ ծանոթ մատուցողին տեսածիս պատճառն ու հասկանում, որ չի ուզում պատասխանել: Հետո, կրկին ընկերներիս աչքից աննկատ, աստիճաններով արագ բարձրանում եմ՝ փորձելու հասկանալ, թե ինչու են որոշել պատերից հանել Սարգսյանի նկարները: Արամոն՝ Երևանի կոլորիտային գույներից մեկը, ամեն ինչ կտար, որ այդ պահին չհայտնվեր տհաճ հարցին պատասխանողի դերում: Կարեկցանքով և ըմբռնման ակնկալիքով պատասխանում է.

— Հեղափոխության ժամանակ է հանել. այցելուներն էին պահանջում, որպեսզի Սերժի ու Ռոբերտի նկարները չլինեն պատերին:

Հասկացա՝ ասում է, որ կապ չունի, մեկ ուրիշն է որոշել հանել այդ նկարները: Ակումբում այդ մեկը միայն Մալխասը կարող էր լինել: Բայց մի՞թե դա կարևոր է: Նույնիսկ հիմա դա կարևոր չէ, երբ ասում են՝ ակումբում վերադարձրել են հեռացված նկարները: Պատմությունն արդեն պարզ էր: Պատմությունը՝ դեռ երեկվանը, աչքիդ առաջ ուրացվում ու գռեհկաբար հարմարեցվում էր ժամանակի լողացող կուրսին:

Արագ իջնում եմ ներքև, որտեղ բեմն է, սեղանները, ընկերներս: Հետո դուրս ենք գալիս: Ես՝ առանց ցտեսության, վատ տրամադրությամբ, մեծ հիասթափությամբ և ինչ-որ բան անելու հաստատակամությամբ:

Ներկայացվածը գուցե չնչին ու սովորական դիպված կթվա այն ընթերցողին, որը ժամանակակիցն է եղել պատմական մեծ շրջադարձերի՝ խորհրդային կարգերի փլուզմանը կամ 1998-ի իշխանափոխության բերած վայրիվերումներին, դարձել ժամանակների, արժեքների, հերոսների ու հակահերոսների արագ փոփոխության վկան: Աննշան կթվա նաև նրանց, ովքեր ծանոթ են համաշխարհային պատմության շատ ավելի դրամատիկ իրադարձությունների մանրամասներին, երբ մեծ շրջադարձերը սրբել-տարել են երեկվա արժեքները, դրա բարքերն ու հերոսներին՝ այդ ամենը փոխարինելով նորով, մինչև եկել են դրանց մերժելու ժամանակները:

Պատճառը, թե ինչու այդ, մեծ հաշվով, ոչ արտասովոր դիպվածը հատուկ ուժգնությամբ ինձ խոցեց, բնավ այն չէր, որ երկու տարի եղել էի նախագահ Սարգսյանի մամուլի քարտուղարը կամ նրա քաղաքական թիմակիցը խորհրդարանում: Խորքային պատճառն իմ մասնագիտությունն էր. մի կողմից՝ զգուշավոր ու հարգալից վերաբերմունքն այն ամենի հանդեպ, ինչն արդեն պատմություն է, ու մյուս կողմից՝ խիստ թեական վերաբերմունքն այն ամենին, ինչը դեռ պետք է պատմություն դառնա: Պատմության համակարգված խեղաթյուրումն ու ուրացումը խորթ չէին հայաստանյան քաղաքական մշակույթին: Այն մեր քաղաքական կյանքի երկվորյակն է, ու դա գիտեի և՛ որպես պատմաբան, և՛ որպես քաղաքականությամբ զբաղվող մարդ:

Ահա հենց այդ փոքրիկ դիպվածը դարձավ արագացուցիչը՝ կյանքի կոչելու վաղեմի մտահղացումս ու գրելու այս հուշագրությունը, քաղա-

քական նշանակալի իրադարձությունների վերաբերյալ ականատեսի իմ հիշողությունն ու շատ դեպքերում բացառիկ տեղեկությունները փոխանցելու գալիք սերունդներին: Երբ աչքիդ առաջ խեղաթյուրվում է իրականությունը, դա դեռ քաղաքականություն է, կարելի է վրդովվել ու առաջ գնալ: Բայց երբ ուրանում են «պատմությունը», դա այլ բան է. փչացած հիշողությունն ամենամեծ չարիքն է, որն ունակ է գիլիոտին դառնալ յուրաքանչյուր ժողովրդի գլխին:

Ես պետծառայության տարիներին օրագիր էի պահել, գրառումներ կատարել տեղի ունեցած քաղաքական առանցքային իրադարձությունների մասին, այդ ամենն ամբարել հիշողությանս մեջ՝ պատեհ պահին շարադրելու մտադրությամբ: Չէ՞ որ պատմական կարևոր իրադարձություններն ուսումնասիրելիս մասնագետների առաջին հայացքն ուղղվում է հենց նման աղբյուրներին՝ այդ դեպքերի մասնակիցների կամ ականատեսների հուշագրություններին ու վկայություններին:

Երբ հուշագրության գաղափարը միս ու արյուն ստացավ, պետք էր հասկանալ, թե հատկապես ո՛ր իրադարձությունների վրա արժի սևեռել ուշադրությունս: Թեև քաղաքականության մեջ ու պետական կյանքում մանրուքներ իսկապես չկան, բայց 2008-2018 թթ., երբ ես այս կամ այն կարգավիճակով իշխանության միջանցքներում էի, Հայաստանում ու նրա շուրջ տեղի ունեցած պատմական նշանակության առանցքային զարգացումները, մեծ հաշվով, երեքն էին՝ երևացող ու անտեսանելի բազմաթիվ թելերով միմյանց փոխկապակցված ու բոլոր դեպքերում էլ միջազգային մեծ արձագանք ստացած՝ Սարգսյանի նախագահության մեկնարկին Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման փորձը՝ ֆուտբոլային դիվանագիտությունը, Լեռնային Ղարաբաղի շուրջ տեղի ունեցած իրադարձությունները և 2018 թ. ներքաղաքական ճգնաժամն ու իշխանափոխությունը:

Արցախյան խնդրի մասին իմ տեղեկություններն ամբողջական չէին, կցկտուր էին. նախ՝ բուն բանակցային գործընթացին անձամբ ներկա չլինելու և այդ բանակցությունների խորհրդապահական բնույթով պայմանավորված: Այդ տեղեկություններն այնպիսին չէին, որ ընթերցողին ճշգրտորեն փոխանցելով՝ հնարավորություն տային ստույգ, համակարգված ու ամբողջական պատկերացում կազմել այդ հիմնախնդրի մասին: Այդուհանդերձ, այս հուշագրության մեջ տեղ են գտել այդ հարցին վերա-